

«Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ
Տնօրեն՝ Վահան Ստեփանյանին
ՀՀ, ք. Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5Բ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝
պարոն Արթուր Ջավադյանին
ՀՀ, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 6

ՀՀ Ֆինանսների նախարար՝
պարոն Դավիթ Սարգսյանին
ՀՀ, ք. Երևան, Մելիք-Աղամյան փող., 1 շենք

(ա.ս.հ.)

Անձնագիր՝

(սերիա/համար)

Տրված _____ կողմից _____ թ.

(գրանցման հասցե)

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոնայք Ստեփանյան, Ջավադյան, Սարգսյան,

Ինչպես արդեն տեղյակ եք, սույն թվականի ապրիլի 2-ին ՀՀ Սահմանադրական դատարանը, քննության առնելով ՀՀ ԱԺ պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5, 7, 8, 37, 38, 45 և 86-րդ հոդվածների սահմանադրականության վերաբերյալ գործով դիմումը, իր որոշման 1-5-րդ կետերով որոշել է «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի, 7-րդ հոդվածի 1-ին և 11-րդ մասերի, դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 13-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, 49-րդ հոդվածի 1-ին մասը, 2-րդ հոդվածի 6-րդ կետի, 44-րդ հոդվածի 1-ին մասը, 76-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրությանը հակասող և անվավեր:

ՀՀ սահմանադրական դատարանը **սույն Որոշման 7-րդ կետով՝** ՀՀ Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավանորմերի ուժը կորցնելու վերջնաժամկետ է սահմանել 2014թ. սեպտեմբերի 30-ը:

Սակայն սույն **Որոշման 6-րդ կետով՝** ՀՀ Սահմանադրական դատարանը որոշել է, որ «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 2-10-րդ մասերի, 8, 37, 38, 45-րդ հոդվածների, 49-րդ հոդվածի 2-րդ մասի եւ 86-րդ հոդվածի վեճի առարկա դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների շրջանակներում սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ **դրանցով նախատեսված իրավակարգավորումները չեն կարող հիմքում ունենալ, մեկնաբանվել եւ կիրառվել մարդկանց հայեցողությունից անկախ նրանց սեփականության իրավունքի սահմանափակում ենթադրող իրավակարգավորման համատեքստում, իսկ կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների իրավունքները պետք է իրացվեն միայն համարժեք պարտավորություններով հավասարակշռման սկզբունքին համապատասխան:**

Սույն **Որոշման 8-րդ կետով** ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ **ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:**

Ելնելով վերոնշյալից՝ հայտնում եմ, որ ես՝ _____
(ա.ա.հ.)

ծնված _____ թ. (անձնագիր՝ _____ տրված _____ կողմից
_____ թ., գրանցման հասցե՝ _____),

չեմ ընտրել որևէ պարտադիր կենսաթոշակային ֆոնդ ու ֆոնդի կառավարիչ և պահանջում եմ Ձեզանից, առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 3-րդ, 6-րդ հոդվածների և ՀՀ Սահմանադրական դատարանի սույն ՈԲՈՇՄԱՆ 6-րդ կետի պահանջներով (որն ուժի մեջ է մտել հրապարակման պահից, տես Որոշման 8-րդ կետ), որպես անմիջական գործող նորմեր, ձեռնպահ մնալ ծրագրային մոդուլով իմ փոխարեն պարտադիր կենսաթոշակային ֆոնդ և ֆոնդի կառավարիչ ընտրելուց, ինչպես նաև որպես ՀՀ քաղաքացի և/կամ վարձու աշխատող նախկինում ինձ համար ՀՀ ԿԱ ՊԵԿ փոխանցած անձնական տվյալները, որպես պարտադիր կենսաթոշակային համակարգի շահառու, որևէ կերպ կիրառելուց կամ, այլ պետական կամ մասնավոր մարմիններ փոխանցելուց, քանի դեռ չունեք իմ գրավոր համաձայնությունը դրա վերաբերյալ:

Սույն դիմումն հաշվի չառնելու դեպքում, օգտվելու եմ դատական պաշտպանության իմ իրավունքից, որը երաշխավորված է ՀՀ սահմանադրությամբ:

Հարգանքով,

(Անուն ազգանուն/ ստորագրությունը)

« » ապրիլի 2014թ.